Հավելված
ՀՀ կառավարության 2022 թվականի
հոկտեմբերի 20-ի N 1624 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՈՒ ԲԱՇԽՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են պետության կողմից կենտրոնացված կարգով բժշկական սարքավորումների և գործիքների (այսուհետ՝ բժշկական սարքավորումներ) ձեռքբերման ու բաշխման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի իմաստով բժշկական սարքավորումների և գործիքների կենտրոնացված կարգով ձեռքբերումը՝ բժշկական կազմակերպությունների (անկախ դրանց կազմակերպական-իրավական և սեփականության ձևից) միջև բաշխման նպատակով, բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի շրջանակում պետական բյուջեի «Առողջապահություն» բաժնի համապատասխան միջոցառումների հատկացումների հաշվին Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության գնումների պլանի համաձայն բժշկական սարքավորումների և գործիքների գնումն է:

3. Բժշկական սարքավորումների ձեռքբերումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից՝ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Բժշկական սարքավորումների բաշխումը բժշկական կազմակերպությունների միջև իրականացվում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի հրամանով՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն գրավոր ներկայացված հիմնավորված առաջարկությունների հիման վրա, ինչպես նաև հաշվի առնելով տվյալ բժշկական կազմակերպությունում համանման բժշկական սարքավորման առկայությունը:

5. Բժշկական սարքավորումների բաշխումը մասնավոր բժշկական կազմակերպություններին իրականացվում է միայն ըստ անհրաժեշտության արտակարգ իրավիճակի, արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ:

6. Բժշկական սարքավորումները հանձնվում են բժշկական կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և տվյալ բժշկական կազմակերպության միջև կնքված պայմանագրի հիման վրա, որում նշվում են հատկացման իրավական ձևը և ժամկետը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

20.10.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ